Իրենց իրավունքների խախտման պատճառով բողոք ներկայացնելու իրավունք ունեն բոլոր աշակերտները:
Բողոքը պետք է արդարացի լինի և ծառայի ճշմարտության հաստատմանը:
Քեզ անպայման կլսեն: Ճշմարտությունը կբացահայտվի:
!!! Հիշե՛ք, որ կեղծ մեղադրանքը անազնիվ վարքագիծ է, և դու ևս պատասխանատվության կենթարկվես դրա համար: Բոլոր մարդիկ պատասխանատու են իրենց արարքների համար:

Դպրոցի աշակերտի բողոքը կարող է վերաբերել աշակերտի իրավունքների խախտմանը՝ պայմանավորված ծնողի, խնամակալի (ընտանիքի անդամի), ուսուցչի, այլ աշակերտի, մանդատուրի, դպրոցի որևէ աշխատակցի կամ տնօրենի անօրինական գործողություններով:

> *Օրինակ՝ եթե քեզ ֆիզիկական կամ բառացի բռնության են ենթարկում, եթե քեզ ճնշում են, եթե կարծում ես, որ քեզ հետ անարդար են վարվում կամ եթե քեզ մեղադրում են ինչ-որ բանում առանց որևէ պատճառաբանության և այլն:*

Դու պատճառված վնասի ամբողջական փոխհատուցում պահանջելու իրավունք ունես:

Բողոքի նախապատրաստում

Աշակերտը ինքնուրույն կամ ծնողի/խնամակալի (ընտանիքի անդամի) հետ միասին բողոք ներկայացնելու իրավունք ունի: Բողոքը չի քննարկվի, եթե դրանում նշված չեն դիմողի անունն ու հասցեն, թե որ իրավունքն է խախտվել, և ինչ է խնդրում դիմողը:

Եթե աշակերտի բողոքը դպրոցի տնօրենի դեմ է, այս դեպքում բողոքը պետք է ներկայացվի դպրոցի հոգաբարձուների խորհրդին:

Մնացած բոլոր հարցերի հետ կապված բողոքները պետք է ներկայացվեն դպրոցի տնօրենին:

Որպեսզի քո բողոքը քննարկվի, անհրաժեշտ է այն **գրանցել**:

Պատրաստած բողոքը կարող ես.

- ✓ Կա՛մ ձեռքով գրել թղթի վրա, կա՛մ տպել, այնուհետև գրանցել դպրոցի գործավարի մոտ: Դպրոցի գործավարը պետք է քեզ տա բողոքագրի գրանցման համարը և ամսաթիվը:
- ✓ Կա՛մ պատրաստիր այն էլեկտրոնային եղանակով և ուղարկիր դպրոցի էլեկտրոնային հասցեին քո անձնական XXXX@students.gov.ge էլեկտրոնային հասցեից: Դպրոցի էլեկտրոնային փոստի հասցեն կարող ես գտնել դպրոցի կատալոգում https://catalog.emis.ge/main:

Բողոքի քննարկում

Ցանկացած բողոք քննարկելիս լսում են աշակերտին և նրա համադասարանցիներին, բողոքի հետ առնչվող այլ անձանց, ձեռք են բերվում ապացույցներ: Բողոքը քննարկվում է 1 ամսվա ընթացքում:

- ❖ Ուսուցչի դեմ բողոքը քննարկում է դպրոցի կարգապահական հանձնաժողովը:
- ❖ Դպրոցի այլ աշխատակիցի դեմ բողոքը քննարկվում է տնօրենի կամ կարգապահական հանձնաժողովի կողմից:

Դպրոցի որևէ աշակերտի կամ որևէ աշակերտի ծնողի դեմ ներկայացված բողոքը կքննարկվի տնօրենի կամ կարգապահական հանձնաժողովի կողմից:

- ❖ Տնօրենի դեմ ուղղված բողոքը կքննարկվի դպրոցի հոգաբարձուների խորհրդի կամ կարգապահական հանձնաժողովի կողմից: Տնօրենի դեմ բողոքի հիմք կարող է լինել տնօրենի որոշումը, տնօրենի արարքը կամ անգործությունը:

Երեխայի օգնության թեժ գիծ 111

Զանգը անվճար է

Երբեք մի՛ նահանջիր, երբ զգում ես, որ քո իրավունքը ոտնահարվում է:

Մի՛ վախեցիր: Քո բոլոր իրավունքները պաշտպանված են: